

ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԵՐԿԱՅ ԿԸ ԳՏՆՈՒԻ
ՄԵԾԱՆՈՒՆ ԵՐԱԺԻՇՏ ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲԵՏԻՍԵԱՆԻ ՆՈՒԻՐՈՒՄԾ
ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅԻՆ

Կիրակի, Փետրուար 28ին Կլէնտէյլի Երկրորդական Վարժարանի հանդիսասրահին մէջ Հայ Պարարուեստի Կեդրոնը ներկայացուց Յուշ Երեկոյ մը՝ նուիրուած մեծանուն «Կոմպոզիտոր» եւ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդային «Արտիստ» Խաչատուր Աւետիսեանի:

Հանդիսավար էր Նունէ Աւետիսեան: Գոյս յայտագիրը կը բաղկանար երկու բաժիններէ: Փակման խօսքը կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ իր շնորհաւորութիւնները յայտնելով մեծարեալ Խաչատուր Աւետիսեանին եւ գնահատութիւնը այս ձեռնարկը կազմակերպող Հայ Պարարուեստի Կեդրոնին, ինչպէս նաեւ Տէր եւ Տիկին Վարդան Աղաճանեանի եւ Տիար Անդրանիկ Մուրատեանի: